2026թ. առաջին կիսամյակի

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի

կողմից կատարված աշխատանքների

Հաշվետվություն

1. **Պարկի տարածքում գիտական հետազոտություններ.**

Գլխավոր ձկնաբան-ձկնաբույծ

Առաջին եռամսյակ - Սիգ - 2026 թվականի առաջին եռամսյակում ձկնաբանական ուսումնասիրություններ են իրականացվել Սևանա լճի՝ Ծովազարդ և Ծափաթաղ համայնքների ջրային տարածքներում:

Կատարված ձկնաբանական հետազոտությունների ընթացքում սիգի տարածական բաշխվածության ուսումնասիրությունները ցույց են տվել, որ Սևանա լճի ափամերձ գոտու ամբողջ երկայնքով հունվար, փետրվար ամիսներին ձվադրած՝ IV-V, VI-II սեռահասունության փուլերում գտնվող վերարտադրող սիգ տեսակի ձկների ձևավորված վտառները գտնվել են հիմնականում ափամերձ գոտում՝ 5-15 մետր խորություններում:

Հունվար ամսին երեք անգամ գիտական որս է իրականացվել Ծովազարդ համայնքի ջրային տարածքում՝ 5-15 մետր խորությունների վրա տեղադրվել է երեք հատ՝ 33*33 մմ, 40*40 մմ և 50*50 մմ խորշերով դնովի ցանցերը: Որսվել է՝ 196 հատ սիգ և 10 հատ գեղարքունի տեսակի ձկներ: Ուսումնասիրվող սիգ տեսակի ձկների միջին երկարությունը եղել է՝ 32,6-34,2 սմ, զանգվածը՝ 421,0-489,1 գրամ: Բտվածության միջին գործակիցը՝ F=1,19-1,22, K=1,06-1,08:

Ձկների սեռական արգասիքները գտնվել են հասունացման II, III, IV, V և VI-II փուլերում: Հետազոտված ձկները եղել են 1^+, 2^+, 3^+, 4^+, 5^+ և 6^+ տարեկան: Ուսումնասիրվող ժամանակահատվածում սիգի միջին բեղունությունը կազմել է՝ 7067-44600 հատ ձկնկիթ:

Լճի ջիր ջերմաստիճանը ուսումնասիրվող ժամանակահատվածում՝ 1,5 ° C - 4,5° C:

Սիգի մարմնի երկարության, զանգվածի, բտվածության, բեղունության միջին ցուցանիշները.

Ամիս	Տարիք	Քանակ	Երկարություն, սմ		Զանգված, գ.		Բեղունութուն	Բտվածություն	Որսում
			Մին-Մաքս	Միջին	Մին-Մաքս	Միջին	Հազ. հատ	Φ	%
09.01.26թ. Սիգ Ծովազարդ	1^+	3	26,0-28,0	27,3	212-269	234	-	1,15	4,8
	2^+	23	29,0 - 33,0	30,6	261-443	334,1	8839 - 12167	1,16	37,1
	3^+	29	31,0 – 35,0	33,2	340 - 627	455,9	7067 - 26550	1,19	46,8
	4^+	6	35,0– 38,0	37,0	552 - 735	633,5	19763-25400	1,25	9,7
	5^+	1	39,0	39,0	693	693	-	1,17	1,6
16.01.2026	2^+	15	28,5 – 32,0	30,5	281 -397	340,3	-	1,20	24,6
	3^+	33	31,0 – 35,0	34,0	337 -570	461,9	10633-20107	1,16	54,1
	4^+	9	36,0– 38,5	36,8	486 - 692	585	-	1,17	14,7
	5^+	4	39,0 – 42,0	40,2	680 - 960	849,7	27833-44600	1,30	6,6

24.01.2026թ	2^+	16	28,0-32,0	30,3	282-417	335	-	1,20	21,9
	3^+	42	31,5-35,5	33,5	315-613	446,7	8900-20100	1,18	57,5
	4^+	9	36,0-39,0	37,3	555-821	649	20200-24200	1,25	12,3
	5^+	5	39,0-42,5	40,3	679-941	793	-	1,22	6,9
	6^+	1	54,0	54,0	1779	1779	-	1,13	1,4

Փետրվար ամսին նույն տարածքից որսվել է սիգ ձկնատեսակի 40 առանձնյակ: Ուսումնասիրվող սիգ տեսակի ձկների միջին երկարությունը եղել է՝ 34,3 սմ, զանգվածը՝ 465,4 գրամ: Բտվածության ցուցանիշը՝ F=1,13, K=1,04: Ձկների սեռական արգասիքները գտնվել են սեռահասունացման III - IV, V, VI - II փուլերում: Հետազոտված ձկները եղել են՝ 2^+, 3^+, 4^+ և 5^+ տարեկան: Սիգի միջին բեղունությունը կազմվել է՝ 12100-13500 հատ ձկնկիթ: Լճի ջրի ջերմաստիճանը՝ 2,5° C:

Սիգի սննդառության առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կերի հիմնական բաղադրիչ են կազմել կողալողերը, ինչպես նաև սիգի ձվադրած ձկնկիթը:

Փետրվար ամսին ուսումնասիրվող սիգի մարմնի երկարությունը, զանգվածը, բտվածությունը, բեղունության միջին ցուցանիշը.

Ամիս	Տարիք	Քանակ	Երկարություն, սմ		Զանգված, գ.		Բեղունութուն	Բտվածություն	Որսում
			Մին-Մաքս	Միջին	Մին-Մաքս	Միջին	Հազ. հատ	Ф	%
06.02.26թ. Սիգ									
	2^+	9	29,0 - 32,0	30,2	254-345	303,9	-	1,11	22,5
	3^+	21	32,0 – 35,5	34,2	313 - 537	439,8	13500	1,04	52,5
	4^+	6	36,0– 38,5	36,7	558 - 672	600,7	12100	1,22	15
	5^+	4	39,0 – 41,0	40,2	725 - 843	760,5	-	1,16	10

Մարտ ամսին ձկնաբանական ուսումնասիրություն է իրականացվել Ծափաթաղ համայնքի ջրային տարածքում: 40*40 մմ երկու դնովի ցանցերով որսվել է սիգի 27 առանձնյակ: Ուսումնասիրվել են ձկների չափատարիքային սննդառության առանձնահատկությունները, սեռը և սեռական արգասիքների հասունացման փուլը, տարիքը և բտվածությունը: Ուսումնասիրված սիգ տեսակի ձկների միջն երկարությունը եղել է՝ 32.6 սմ, զանգվածը՝ 428 գրամ: Բտվածության միջին ցուցանիշը F=1,28, K=1,16: Ձկների սեռական արգասիքները գտնվել են հասունացման III և VI – II փուլերում: Հետազոտված ձկները եղել են՝ 1^+, 2^+, 3^+,4^+ տարեկան: Լճի ջրի ջերմաստիճանը՝ 4,3° C:

Սիգի սննդառության առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կերի հիմնական բաղադրիչ են կազմել կողալողերը, թիոտանի խեցգետնակերպերը:

Մարտ ամսին ուսումնասիրվող սիգի մարմնի երկարությունը, զանգվածը, բտվածությունը, բեղունության միջին ցուցանիշը.

Ամիս	Տարիք	Քանակ	Երկարություն, սմ		Զանգված, գ.		Բեղունութուն	Բտվածություն	Որսում
			Մին-Մաքս	Միջին	Մին-Մաքս	Միջին	Հազ. հատ	φ	%
06.02.26թ. Սիգ Ծափաթաղ									
	1^+	2	28,0 - 28,5	28,2	295-305	300	-	1,33	7,4
	2^+	4	29,5 – 30,5	30,0	360 - 385	372	-	1,38	14,8
	3^+	19	31,0– 34,5	32,9	370 - 566	442,2	-	1,24	70,4
	4^+	2	35,0 – 36,0	35,5	485 - 581	533	-	1,18	7,4

Հունվար ամսին Սևանա լճում ձկնաբանական ուսումնասիրությունների ժամանակ որսվել էր նաև գեղարքունի իշխանի 10 առանձնյակ (2^+ տարեկան 4 առանձնյակ, 3^+ տարեկան 6 առանձնյակ): 2^+ տարեկան գեղարքունիների երկարությունը կազմել է՝ 25,5-28,5 սմ, զանգվածը՝ 170-247 գրամ, իսկ 3^+ տարեկան գեղարքունիների երկարությունը՝ 31,0-33,0սմ, զանգվածը՝ 255-363գրամ: Բտվածության միջին գործակիցը՝ F=0,82-1,11: Բոլոր առանձնյակների մոտ սեռական արգասիքները գտնվել են հասունացման II փուլում:

Ուսումնասիրված ձկները սնվել են կողալողերով, ճպուռի թրթուրներով, ինչպես նաև կարասի մանրաձկներով:

Հունվար ամսին որսված Սևանի գեղարքունի իշխանի՝ ձևաչափական ցուցանիշները.

Ամիս/ձուկ	Երկարություն սմ	Զանգված գ.	Սեռ,սեռական արգասիքների հասունացման փուլ	Տարիք	Բտվածություն φ
02.01.26թ Գեղարքունի Գ. Ծովազարդ	32,0	363	♀- II	3^+	1,11
	32,5	341	♂- II	3^+	0,99
	27,0	170	♀- II	2^+	0,86
16.01.26թ.	31,5	292	♀- II	3^+	0,93
	31,5	255	♂- II	3^+	0,82
	33,0	311	♀- II	3^+	0,86
	27,5	195	♂- II	2^+	0,94
24.01.26թ.	31,0	330	♀- II	3^+	1,11
	28,5	247	♀- II	2^+	1,07
	25,5	173	♀- II	2^+	1,04

Խեցգետին – առաջին եռամսյակում Սևանա լճում իրականացվել է խեցգետնային համակեցության էկոլոգիական հետազոտություններ:

Խեցգետնի պոպուլացիոն և կենսաբանական ցուցանիշների ուսումնասիրություններ է կատարվել փոքր Սևանի թերակղզու հյուսիսային հատվածի ջրային տարածքում:

Ձեռք բերված փորձանյութի մշակման արդյունքում ստացվել են պոպուլացիայի չափատարիքային, սեռական կառուցվածքի մասին տվյալներ:

Արդյունքում պարզվել է, որ արու խեցգետինների մասնաբաժինը գարնանը (մարտ) համեմատաբար մեծացել է:

Սևանա լճում խեցգետնի վերարտադրման ընթացքի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ձվադրման գործընթացը սկսվել է փետրվարի առաջին տասնօրյակից: Լճում խեցգետնի բեղմնավորված ձվերով էգերը հայտնաբերվել են մարտի սկզբին, երբ ջրի ջերմաստիճանը լճի հատակային շերտերում տատանվել է 2,0°-2,5°C:

Ուսումնասիրվող տարածքում որսաբաժնում արուների թվաքանակը գերակշռում է էգերի համեմատ: Արուների հարաբերակցությունը կազմում է 2:1: Այս հարաբերակցությունը վկայում է գարնանը արուների մեծ ակտիվության մասին: Արուների ակտիվության և որսագործիքների ընտրողականության հետևանքով թակարդների մեջ հիմնականում ընկնում են առավել ակտիվ կենդանիները:

Խեցգետնի ձևաչափական ցուցանիշների հետազոտությունները ցույց են տվել, որ արու խեցգետինների միջին երկարությունը՝ 9,6 սմ է, զանգվածը՝ 24,5 գրամ: Էգերի համար համապատասխանաբար ցուցանիշները՝ 10,0սմ, զանգվածը՝ 25,1 գրամ:

Տարիքային խմբերը կազմել են՝ 2-4 տարեկան խեցգետինները:

Խորությունների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով խեցգետինների տարածվածության սահմանները: Բեղմնավորված այս հիդրոբիոնտները հիմնականում կենտրոնացված էին 2-5 մետր խորություններում:

Երկրորդ եռամսյակ - Սիգ - 2026 թվականի ապրիլի 10-ին ձկնաբանական ուսումնասիրություն է իրականացվել Սևանա լճի Ծովազարդ համայնքի ջրային տարածքում՝ 36*36 մմ, 45*45 մմ խորշեր ունեցող երկու դնովի ցանցերով, 5-15 մետր խորություններից որսվել է սիգի 36 առանձնյակ և 1 հատ կարաս տեսակի ձուկ: Ուսումնասիրվել են ձկների չափատարիքային, առանձնահատկությունները, սեռը և սեռական արգասիքների հասունացման փուլը, տարիքը և բտվածությունը: Ուսումնասիրվող սիգ տեսակի ձկների միջին երկարությունը եղել է 32,0 սմ, զանգվածը՝ 400,7 գրամ: Բտվածության միջին ցուցանիշը՝ F=1,16, K=1,07:

Ձկների սեռական արգասիքները գտնվել են սեռահասունության երկրորդ, երրորդ և վեցերորդ փուլերում: Հետազոտված ձկները եղել են՝ 1^+, 2^+, 3^+, 4^+ և 5^+ տարեկան: Լճի ջերմաստիճանն ուսումնասիրվող տարածքում՝ 3,2°C:

Սիգի սննդառության առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կերի հիմնական բաղադրիչ են կազմել թիոտանի խեցգետնակերպերը, կողալողերը, զոոպլանկտոնի և խիրոնոմիդների խառնուրդները:

Ապրիլ ամսին ուսումնասիրվող սիգի մարմնի երկարությունը, զանգվածը, բտվածության միջին ցուցանիշները.

Ամիս	Տարիք	Քանակ	Երկարություն, սմ		Զանգված, գ.		Բտվածություն	Որսում
			Մին-Մաքս	Միջին	Մին-Մաքս	Միջին	ֆ	%
10.04.26թ.	1^+	6	28,0-29,5	28,8	259-300	273,8	1,14	16,7
	2^+	11	30,0 - 30,5	30,1	288-351	315,4	1,15	30,5

Սիգ Ծովազարդ	3+	13	31,0 – 35,0	32,4	288-618	394,1	1,14	36,1
	4+	2	37,5	37,5	532-620	576	1,09	5,6
	5+	4	39,0 – 41,0	40,1	665-931	758,7	1,17	11,1

2026 թվականի ապրիլի 17-ին ձկնաբանական ուսումնասիրություն է իրականացվել Սևանա լճի Փամբակ համայնքի ջրային տարածքում, 22*22 մմ, 36*36 մմ, 40*40 մմ, 50*50 մմ խորշեր ունեցող չորս դնովի ցանցերով, 4-15 մ խորություններից որսվել է սիգի 88 առանձնյակ, Գեղարքունի իշխանի 7 առանձնյակ, կողակ՝ 2 առանձնյակ, կարաս՝ 8 առանձնյակ, բեղածուկ՝ 2 առանձնյակ, սազան՝ 1 առանձնյակ: Ուսումնասիրվող սիգ տեսակի ձկների միջին երկարությունը եղել է՝ 30,7 սմ, զանգվածը՝ 463,6 գրամ: Բտվածության միջին ցուցանիշը՝ F=1,25, K=1,13: Ձկների սեռական արգասիքները գտնվել են սեռահասունության՝ III – IV, VI – II փուլերում: Հետազոտված սիգ տեսակի ձկները եղել են՝ 1+, 2+, 3+, 4+ և 5+ տարեկան: Լճի ջերմաստիճանը ուսումնասիրվող տարածքում՝ 5,1 °C:

Սիգի սննդառության առանձնահատկությունների ուսումնաիրությունները ցույց են տվել, որ կերի հիմնական բաղադրիչ են կազմել թիոտանի խեցգետնակերպերը, կողալողերը, զոոպլանկտոնի և խիրոնոմիդների խառնուրդները:

Կենսաբանական վերլուծության է ենթարկվել գեղարքունի իշխանի 7 առանձնյակ (2+ տարեկան 1 առանձնյակ, 3+ տարեկան 4 առանձնյակ, 4+ տարեկան մեկ առանձնյակ և 5+ տարեկան մեկ առանձնյակ): 2+ տարեկան գեղարքունի 1 առանձնյակի երկարությունը՝ 26,0 սմ, զանգվածը՝ 166,0 գրամ, 3+ տարեկան գեղարքունիներիերկարությունը կազմել է՝ 29,0 – 31,5 սմ, զանգվածը՝ 215,0 246,0 գրամ, 4+ տարեկան գեղարքունի մեկ առանձնյակի երկարությունը՝ 35,0 սմ, զանգվածը՝ 473,0 գրամ, 5+ տարեկան գեղարքունի մեկ առանձնյակի երկարությունը՝ 42,5 սմ, զանգվածը՝ 710,0 գրամ: Բտվածության միջին ցուցանիշը եղել է՝ F=0,78 – 1,10, K=0,70 – 1,00:

Ձկների սեռական արգասիքները գտնվել են սեռահասունության II և III փուլերում: Գեղարքունի իշխանի սննդառության առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կերի մեջ գերակա բաղադրիչ են կազմել կողալողերը և փափկամարմինները:

Վերը նշված ժամանակահատվածում կենսաբանական վերլուծության է ենթարկվել կարասի 2+ տարեկան 2 առանձնյակ, 3+ տարեկան 3 առանձնյակ և 4+ տարեկան 3 առանձնյակ: 2+ տարեկան ձկների երկարությունը կազմել է՝ 9,0 – 18,0 սմ, զանգված՝ 18,0 – 21,0 գրամ: 3+ տարեկան ձկների երկարությունը կազմել է՝ 14,0 – 18,0 սմ, զանգվածը՝ 73,0 -231,0 գրամ, 4 տարեկան ձկների երկարությունը կազմել է 17,0 – 18,0 սմ, զանգվածը՝ 119,0 – 154,0 գրամ (աղյուսակ):

Ամիս	Տարիք	Քանակ	Երկարություն սմ		Զանգված գ.		Բտվածություն Ф	Որսում %
			Մին.- Մաքս.	Միջին	Մին.- Մաքս.	Միջին		

Սիգ 17.04.26թ. Փամբակ	1+	1	27,0	27,0	222	222	1,13	1,14
	2+	11	28,0 – 30,5	29,9	273 - 418	351,2	1,31	12,5
	3+	56	30,0 – 34,5	32,3	335 - 539	432,3	1,28	63,6
	4+	14	35,0 – 37,0	35,8	505 - 662	581,9	1,27	15,9
	5+	6	38,0 – 41,0	39,1	650 - 797	726,3	1,22	6,9

Ապրիլ ամսին ուսումնասիրվող սիգի մարմնի երկարությունը, զանգվածը, բտվածությունը, բեղունության միջին ցուցանիշը.

17.04.2026 թվականին Սևանա լճից որսված Գեղարքունի իշխանի ձևաչափական ցուցանիշները.

Ամիս/Ձուկ	Երկարություն սմ	Զանգված գ.	Սեռ, սեռական արգասիքների հասունացման փուլ	Տարիք	Բըտվածությունն ըստ Ֆուլտոնի
Գեղարքունի իշխան գ. Փամբակ	42,5	710	♀ - III	5+	0,92
	31,0	246	♀ - II	3+	0,83
	29,0	215	♀ - II	3+	0,88
	31,5	244	juv	3+	0,78
	29,5	228	♀ - II	3+	0,89
	26,0	166	♀- II	2+	0,94
	35,0	473	♀ - II	4+	1,10

17.04.2026 թվականին Սևանա լճից որսված Կարասի ձևաչափական ցուցանիշները.

Ամիս/Ձուկ	Երկարություն սմ	Զանգված գ.	Սեռ, սեռական արգասիքների հասունացման փուլ	Տարիք	Բըտվածությունն ըստ Ֆուլտոնի
Կարաս գ. Փամբակ	9,0	21,0	♀ - II	2+	2,88
	9,0	18,0	♀ - II	2+	2,47
	18,0	231,0	♀ - IV	3+	3,96
	14,0	73,0	♀ – III - IV	3+	2,66
	15,0	88,0	♀ - III	3+	2,61
	17,0	119,0	♀ – III - IV	4+	2,42
	17,0	112,0	♀ – III – IV	4+	2,28
	18,0	154,0	♀ – III - IV	4+	2,64

17.04.2026 թվականին Սևանա լճից որսված Կողակի, Բեղաձկան և Սազանի ձևաչափական ցուցանիշները.

Ամիս/Ձուկ	Երկարություն սմ	Զանգված գ.	Սեռ, սեռական արգասիքների հասունացման փուլ	Տարիք	Բրտվածությունն ըստ Ֆուլտոնի
գ. Փամբակ Կողակ	13,0	40,0	♀ - II	3^+	1,82
	12,5	34,0	♀ - II	2^+	1,74
Բեղաձուկ	13,5	42,0	♀- III	3^+	1,71
	18,0	95,0	♀ – III - IV	6^+	1,63
Սազան	17,0	156	juv	4^+	3,17

2026 թվականի մայիսի 12-ին ձկնաբանական ուսումնասիրություն է իրականացվել Սևանա լճի Փամբակ համայնքի ջրային տարածքում: 30*30 մմ, 40*40 մմ և 50*50 մմ խորշեր ունեցող երեք դնովի ցանցերով, 5 – 15 մետր խորություններից որսվել է սիգի՝ 49 առանձնյակ, գեղարքունի իշխանի՝ 8 առանձնյակ, կողակ 1 առանձնյակ, կարաս՝ 4 առանձնյակ, բեղաձուկ՝ 2 առանձնյակ և սազան 1 առանձնյակ: 30*30 մմ խորշեր ունեցող՝ 80*3 մ երկարության դնովի ցանցով որսվել է՝ 15 առանձնյակ սիգ տեսակի ձկներ, որոնց միջին երկարությունը՝ 24,8 սմ է եղել, զանգվածը՝ 202,3 գրամ: Բտվածության միջին ցուցանիշը՝ F=1,26, K=1,13: Ձկների սեռական արգասիքները գտնվել են սեռահասունության II և III փուլերում: Հետազոտված սիգ տեսակի ձկները եղել են <1, 1^+, 2^+ տարեկան: Սիգի սննդառության առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կերի հիմնական բաղադրիչ են կազմել թիոտանի խեցգետնակերպերը, զոոպլանկտոնի և խիրոնոմիդների խառնուրդները: Նույն որսացանցից որսվել և կենսաբանական վերլուծության է ենթարկվել գեղարքունի իշխանի 8 առանձնյակ (2^+ տարեկան 2 առանձնյակ, 3^+ տարեկան 6 առանձնյակ):

2^+ տարեկան գեղարքունի առանձնյակների երկարությունը կազմել է՝ 22,0 – 27,0 սմ, զանգվածը՝ 110,0 – 216,0 գրամ, 3^+ տարեկանների երկարությունը կազմել է՝ 29,0 32,5 սմ, զանգվածը՝ 237,0 – 325,0 գրամ: Բտվածության ցուցանիշը եղել է՝ F=0,86 – 1,10, K=0,78 – 0,95: Ձկների սեռական արգասիքները գտնվել են սեռահասունության II փուլում: Գեղարքունի իշխանի սննդառության առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կերի մեջ գերակա բաղադրիչ են կազմել կողալողերը և փափկամարմինները: Լճի ջերմաստիճանը ուսումնասիրվող տարածքում՝ 10^oC:

Նույն տարածքում՝ 8-9 մետր խորություններից 40*40 մմ խորշեր ունեցող դնովի ցանցով որսվել է սիգի 22 առանձնյակ: Ուսումնասիրվող սիգ տեսակի ձկների միջին երկարությունը եղել է 31,9 սմ, զանգվածը՝ 426,8 գրամ: Բտվածության միջին ցուցանիշը՝ F=1,32, K=1,19: Ձկների սեռական արգասիքները գտնվել են սեռահասունության III փուլում: Հետազոտված սիգ տեսակի ձկները եղել են՝ 2^+ և 3^+ տարեկան:

Նույն տարածքում՝ 10 – 15 մետր խորություններից 50*50 մմ խորշեր ունեցող դնովի ցանցով պարզվել է սիգի՝ 12 առանձնյակ: Ուսումնասիրվող սիգ տեսակի ձկների միջին երկարությունը եղել է՝ 34,9 սմ, զանգվածը՝ 617,6 գրամ: Բտվածության միջին ցուցանիշը՝ F=1,38, K=1,24: Ձկների սեռական արգասիքները գտնվել են սեռահասունության III փուլում: Հետազոտված սիգ տեսակի ձկները եղել են՝ 3^+, 4^+, 5^+ և 6^+ տարեկան:

Սիգի սննդառության առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կերի հիմնական բաղադրիչ են կազմել թիոտանի խեցգետնակերպերը, կողալողերը, զոոպլանկտոնային և խիրոնոմիդների խառնուրդները:

Մայիս ամսին ուսումնասիրվող սիգի մարմնի երկարությունը, տարիքը, զանգվածը, բտվածության ցուցանիշները.

Ամիս	Տարիք	Քանակ	Երկարություն սմ		Զանգված գ.		Բտվածության Փ	Որսում %
			Մին.- Մաքս.	Միջին	Մին.-Մաքս.	Միջին		
30*30 մմ	<1	9	23,0 – 24,5	23,9	160 – 218	185,6	1,36	60
	1^+	4	25,0 – 25,5	25,1	191 – 222	205,0	1,29	26,7
	2^+	2	28,0 – 30,0	29,0	206 - 339	272,5	1,09	13,3
40*40 մմ	2^+	2	30,0	30,0	320 - 378	349	1,29	9,1
	3^+	20	31,0 – 34,0	32,0	344 - 545	434,6	1,31	90,9
50*50 մմ	3^+	8	31,0 – 34,0	33,1	446 – 569	486,9	1,35	66,7
	4^+	1	35,5	35,5	602	602	1,35	8,3
	5^+	2	38,0 – 40,0	39,0	693 – 1046	869,5	1,44	16,7
	6^+	1	46,0	46,0	1175	1175	1,21	8,3

Սևանա լճից որսված Գեղարքունի իշխանի ձևաչափական ցուցանիշները.

Ամիս/Ձուկ	Երկարություն սմ	Զանգված գ.	Սեռ, սեռական արգասիքների հասունացման փուլ	Տարիք	Բտվածությունն ըստ Ֆուլտոնի
12.05.26թ Գեղարքունի իշխան	30,0	240	♀ - II	3^+	0,89
	32,0	304	♀ - II	3^+	0,93
	27,0	216	♂– II	2^+	1,10
	29,5	222	♂– II	3^+	0,86
	22,0	110	♂ - II	2^+	1,03
	29,0	237	♂ - II	3^+	0,97
	30,0	280	♀ - II	3^+	1,04
	32,5	325	♀ - II	3^+	0,95

Սևանա լճից որսված Կարասի, Բեղաձկան, Կողակի և Սազանի ձևաչափական ցուցանիշները.

Ամիս/Ձուկ	Երկարություն սմ	Զանգված գ.	Սեռ, սեռական արգասիքների հասունացման փուլ	Տարիք	Բտվածությունն ըստ Ֆուլտոնի
12.05.26թ Կարաս	19,0	249	♀ - IV	5^+	3,63
	14,0	94	♂ - IV	3^+	3,43
	14,5	93	- IV	3^+	3,05
	14,0	93	♀ – III	3^+	3,39
Բեղաձուկ	21,0	151	♀ - IV	8^+	1,63
	18,0	95	♀ -III - IV	7^+	1,63
Կողակ	19,5	112,0	♂- IV	4^+	1,74
Սազան	16,0	154,0	juv	4^+	2,69

2026 թվականի հունիսի 10-ին ձկնաբանական ուսումնասիրություն է իրականացվել Սևանա լճի Շորժա համայնքի ջրային տարածքում: Երկու հատ 40*40 մմ դնովի ցանցերով՝ 10–15 մետր խորություններից որսվել է սիգի 30 առանձնյակ: Ուսումնասիրվող սիգ տեսակի ձկների միջին երկարությունը եղել է 32,6 սմ, զանգվածը՝ 451,9 գրամ: Բտվածության միջին ցուցանիշը՝ F=1,31, K=1,18: Ձկների սեռական արգասիքները գտնվել են սեռահասունության III-րդ փուլում: Հետազոտված սիգ ձկները եղել են 1^+, 2^+, 3^+ և 4^+ տարեկան: Լճի ջերմաստիճանը ուսումնասիրվող տարածքում՝ 11°C:

Սիգի սննդառություն առանձնահատկությունների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ կերի հիմնական բաղադրիչ են կազմել թիոտանի խեցգետնակերպերը, կողալողերը, զոոպլանկտոնի և խիրոնոմիդների խառնուրդները:

Հունիս ամսին ուսումնասիրվող սիգի մարմնի երկարությունը, տարիքը, զանգվածը, բտվածության ցուցանիշները.

Ամիս	Տարիք	Քանակ	Երկարություն սմ		Զանգված գ.		Բտվածության Ф	Որսում %
			Մին.-Մաքս.	Միջին	Մին.-Մաքս.	Միջին		
10.06.2026 Սիգ Շորժա 40*40 մմ	1^+	5	27,5 – 29,5	28,5	304 – 367	332,4	1,43	16,7
	2^+	7	29,5 – 33,0	31,1	263 – 445	376,0	1,25	23,3
	3^+	14	36,0 – 37,0	33,9	352 – 580	485,6	1,25	46,7
	4^+	4	36,0 – 37,0	36,5	485 - 789	615,7	1,27	13,3

2026 թվականի հունիսի 23-ին ձկնաբանական ուսումնասիրություն է իրականացվել Սևանա լճի Լճափ համայնքի ջրային տարածքում երկու 33*33 մմ, 40*44 մմ խորշեր ունեցող դնովի ցանցերով: 5 – 10 մետր խորություններից որսվել է

սիգ տեսակի ձկան 1 առանձնյակ, գեղարքունի ենթատեսակի՝ 3 առանձնյակ, կարաս՝ 15 առանձնյակ, բեղաձուկ՝ 4 առանձնյակ և սազան՝ 3 առանձնյակ:

Ուսումնասիրվել են ձկների չափատարիքային, սննդառության առանձնահատկությունները, սեռը և սեռական արգասիքների հասունացման փուլը, տարիքը և բտվածությունը (Աղ. 10):

Հետազոտված ձկների սեռական արգասիքները գտնվել են սեռահասունության II – III – IV փուլերում: Ուսումնասիրվող ձկների հիմնական բաղադրիչ են կազմել թիոտանի խեցգետնակերպերը, կողալողերը, զոոպլանկտոնի և խիրոնոմիդների խառնուրդները: Լճի ջերմաստիճանը ուսումնասիրվող տարածքում՝ 18°C:

23.06.2026թ. ուսումնասիրվող սիգ, գեղարքունի իշխան, կարաս, բեղաձուկ և սազան տեսակի ձկների մարմնի երկարությունը, տարիքը, զանգվածը, բտվածության միջին ցուցանիշները.

Ամիս	Տարիք	Քանակ	Երկարություն սմ		Զանգված գ.		Բտվածության Փ	Որսում %
			Մին.-Մաքս.	Միջին	Մին.-Մաքս.	Միջին		
Սիգ	1+	1	27,0	27,0	269	269	1,37	3,8
Գեղարքունի իշխան	2+	2	24,0	24,0	132 - 152	142	1,02	7,7
	4+	1	35,0	35,0	439	439	1,02	3,9
Կարաս	3+	2	15,0 – 17,0	16,0	74 - 115	94,5	2,26	7,7
	4+	2	19,0	19,0	143 - 161	152	2,21	7,7
	5+	5	19,5 – 20,5	20,1	146 - 194	174	2,15	19,3
	6+	6	21,0 – 24,5	22,8	183 - 358	269,8	2,22	23,1
Բեղաձուկ	5+	2	12,5 – 13,5	13,0	30 - 38	34	1,54	7,7
	6+	1	15,0	15,0	43	43	1,27	3,8
	7+	1	20,0	20,0	98	98	1,22	3,8
Սազան	6+	1	20,5	20,5	202	202	2,34	3,8
	7+	2	26,0 – 28,5	27,2	135 - 542	488,5	2,40	7,7

Խեցգետին – 2026 թվականի երկրորդ եռամսյակում Սևանա լճում իրականացվել է խեցգետնային համակեցության էկոլոգիական հետազոտություններ:

Խեցգետնի պոպուլյացիոն և կենսաբանական ցուցանիշների ուսումնասիրություններ են կատարվել Սևանա լճի տարբեր հատվածներում՝ Փոքր Սևանի Ծովազարդ, Շորժա և Մեծ Սևանի Արտանիշ համայնքների ջրային տարածքներում: Վերարտադրման ցուցանիշների գնահատման համար հետազոտվել է 52 էգ խեցգետին:

Սևանա լճում խեցգետնի պոպուլյացիայի սեռական կառուցվածքի ուսումնասիրությունները ցույց են տվել, որ ուսումնասիրվող տարածքներում արուների թվաքանակը գերազանցում է էգերի համեմատ: Արուների հարաբերակցությունը կազմում է 2:1: Այս հարաբերակցությունը վկայում է գարնանը արուների մեծ ակտիվության մասին: Արուների ակտիվության և որսագործիքների ընտրողականության հետևանքով թակարդների մեջ հիմնականում ընկնում են առավել ակտիվ կենդանիները:

Սևանա լճում խեցգետնի ձևաչափական ցուցանիշների հետազոտությունները ցույց են տվել, որ երկրորդ եռամսյակում որսաբաժնում խեցգետինների միջին

երկարությունը Փոքր Սևանում համապատասխանաբար եղել է 9,9 սմ-ից – 11,0 սմ, զանգվածը՝ 27,7 գրամից – 34,3 գրամ: Մեծ Սևանում՝ միջին երկարությունը՝ 10,6 սմ, զանգվածը՝ 30,0 գրամ: Տարիքային խմբերը կազմել են 2-4 տարեկան խեցգետինները: Լճում խորությունների ընտրությունը կատարվել է հաշվի առնելով խեցգետինների տարածվածության սահմանները: Բեղմնավորված էգերի մեծ կուտակումներ է առաջացել լճի ափամերձ գոտում՝ մինչև 2-5 մետր խորությունների վրա: Նրանց թվաքանակը նվազում է 10 մետրից սկսած, իսկ արուների մոտ թվաքանակն սկսում է կրճատվել աստիճանաբար:Կենդանիների թվաքանակի կրճատվելը հավանաբար կապված է գրունտի փոփոխության հետ: Մեծ խորություններում գերակշռում է փափուկ տիղմը, որը խեցգետնի համար նախընտրելի բիոտոպ չի հանդիսանում: Ուսումնասիրությունների ժամանակահատվածում ջրի մակերեսային շերտի ջերմաստիճանը օրվա տարբեր ժամերի և լճի տարբեր խորության գոտիներում տատանվել է՝ 3,1 °C – 11,0 °C սահմաններում:

Ձկնաբուծություն – Սևանի իշխանի պաշարների վերականգնմանև ձկնաբուծության զարգացման հիմնադրամի կողմից Սևանա լճում գեղարքունի և մառային իշխան ենթատեսակների պաշարների վերականգնման նպատակով 2026 թվականի մայիսի 22-ին «Սևանի իշխան» ՓԲԸ-ի Կարճաղբյուր համայնքում տեղակայված մանրաձկան գործարանից բաց է թողնվել գեղարքունի ենթատեսակի թվով 100850 մանրաձուկ՝ 16,5 գրամ միջին զանգվածով, ընդամենը 1664 կգ և ամառային իշխան ենթատեսակի թվով 20175 մանրաձուկ՝ 6,0 գրամ միջին զանգվածով, ընդամենը՝ 121,05 կգ:

Մանրաձկների բացթողումն իրականացվել է Կարճաղբյուր համայնքին հարող ջրային տարածքում: Բաց թողնված վայրերի տարածքներում սահմանվել է շուրջօրյա հերթապահություն մանրաձկների բնական հարմարվողականությունն ապահովելու համար:

Հիդրոկենսաբան - 2026թ. երկրորդ եռամսյակում հիդրոկենսաբանի կողմից ուսումնասիրվել է Սևանա լիճ թափվող Դրախտիկ, Ձկնագետ, Կարճաղբյուր և Վարդենիկ գետերի տարբեր հատվածների ջրերում սապրոֆիտ մանրէների թվաքանակը (աճեցված 37^{0}C 24 ժամվա ընթացքում և 20^{0}C՝ 48 ժամ տևողությամբ) և կոլի-ինդեքսը (աղիքային ցուպիկների խմբի մանրէների քանակը 1լ. ջրում): 20^{0}C-ում և 37^{0}C-ում աճեցված սապրոֆիտ մանրէների քանակական արժեքների հարաբերակցության հիման վրա որոշվել է գետի ինքնամաքրման ինտենսիվությունը: Զուգահեռ նաև ուսումնասիրվել է ջրում լուծված թթվածնի և օրգանական նյութի պարունակությունը՝ ըստ պերմանգանատային օքսիդացման արժեքի:

Մանրէաբանական հետազոտությունների արդյունքներից ելնելով՝ կատարվել է գետերի ջրերի որակի գնահատում:

Մանրէաբանական հետազոտություններ են իրականացվել նաև Փոքր Սևանի հիմնական լողափերում (հանրային թիվ 1, թիվ 2, թիվ 3 և թերակղզու լողափ), ինչպես նաև «Սեմոյի մոտ» ռեստորանային համալիրի հարակից տարածքում:

Գետ Դրախտիկ

Մինչ Դրախտիկ գյուղ մտնող հատված- կատարված հետազոտությունների արդյունքում պարզվել է, որ գետի այս հատվածի դիտակետի ջրերում 20° C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 500 ԳԱՄ/մլ և 130 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 0,05

հզ. ԳԱՄ/լ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման ինտենսիվության արժեքը կազմել է 3,8: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 10 մգO_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 6,8 մգO_2/դմ^3 (աղ.1):

Աղյուսակ 1. Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Դրախտիկ գետի տարբեր հատվածների ջրերում
22.04.2026թ.

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հզ. ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO_2/դմ^3,	Պերմանգան ատային օքսիդացում, մգO/դմ^3
	20°C	37°C			
Մինչ Դրախտիկ գյուղ մտնող հատված	500	130	0,05	10	6,8
Գետաբերան	5600	880	20	10	6,4

Գետաբերան- գետը, հոսելով համանուն գյուղի միջով, խիստ աղտոտվում է ֆեկալ-տնտեսական և անասնապահական հոսքաջրերով, որոնց հետևանքով վերցված փորձանմուշում՝ նախորդ դիտակետի համեմատ՝ արձանագրվել է մանրէների թվաքանակի ավելացում՝ հատկապես աղիքային ցուպիկների: Այսպես, 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 5600 ԳԱՄ/մլ և 880 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 20 հզ. ԳԱՄ/լ: Բարձրացել է ինքնամաքրման ինտենսիվությունը (6,3): Ջրում լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը գրեթե չի փոփոխվել:

Համաձայն ՀՀ առողջապահության նախարարության՝ 2018թ. N 09 հրամանի՝ «Ռեկրեացիոն նպատակով ջրօգտագործման վայրերում մակերևութային ջրային ռեսուրսների ջրի որակին ներկայացվող հիգիենիկ պահանջների» ընդհանուր կոլիֆորմ մանրէների (37°C-ում աճեցված աղիքային ցուպիկների խմբի մանրէներ) թվաքանակը չպետք է գերազանցի 500 ԳԱՄ/ 100մլ. արժեքը: Նշված արժեքը գետաբերանի հատվածում գերազանցել է ՍԹԿ-ն (սահմանային թույլատրելի կոնցենտրացիան) 4 անգամ:

Գետ Ձկնագետ

Վերին հոսանք (թունելի մուտքից մոտ 5 կմ վերև) – կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ գետի այս հատվածի ջրերում

20^0C և 37^0C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 2200 ԳԱՄ/մլ և 50 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 0,05 հզ. ԳԱՄ/լ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը կազմել է 44: Լուծված թթվածնի պարունակությունը եղել է 9,8 մգO_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 6,4 մգO_2/դմ^3 (աղ.2):

Աղյուսակ 2. Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը, ջրում լուծված թթվածնի և պերմանգանատային օքսիդացման արժեքը Ձկնագետի տարբեր հատվածների ջրերում
22.04.2026թ.

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հզ. ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO_2/դմ^3,	Պերմանգան ատային օքսիդացում, մգO/դմ^3
	20°C	37°C			
Վերին հոսանք (թունելի մուտքից մոտ 5 կմ վերև)	2200	50	0,05	9,8	6,4
Սեմյոնովկա գյուղի անասնապահա կան հոսքաջրերի մուտքից մոտ 50մ ներքև	10000	3000	20	10,9	7
Գետաբերան	4300	500	12	10,9	6,2

Սեմյոնովկա գյուղի անասնապահական հոսքաջրերի մուտքից՝ մոտ 50մ ներքև- հոսքաջրերը, լցվելով գետ, այն ենթարկում են խիստ աղտոտման, ինչի արդյունքում վերին հոսանքի համեմատ արձանագրվել է մանրէների թվաքանակի աճ: Այսպես, 20^0C և 37^0C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 10000 ԳԱՄ/մլ և 3000 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 20 հզ. ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 10 անգամ: Նվազել է ինքնամաքրման գործընթացի ինտենսիվությունը (3,8): Որոշ չափով բարձրացել է ջրում լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը:

Գետաբերան- ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հոսքաջրերի մուտք-գետաբերան հատվածում գետը ինքնամաքրվում է, արդյունքում հետազոտված մանրէէրի թվաքանակը նվազել է 2,3-6 անգամ: Չնայած դրա, դեռևս պահպանվում է մանրէներով աղտոտվածության բարձր մակարդակը: Նախորդ դիտակետի համեմատ ակտիվացել է ինքնամաքրման գործընթացը (8,6): ՍԹԿ-ն գետաբերանի հատվածում գերազանցել է 2,4 անգամ: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը կազմել է 10.9, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 6,2 մգO/դմ:

Գետ Կարճաղբյուր

Մինչ Կարճաղբյուր գյուղ մտնելը - 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 1450 ԳԱՄ/մլ և 240 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 1 հզ. ԳԱՄ/լ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը կազմել է 6: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 9,5 8մգO_2/դմ^3,իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 2,9 մգO/դմ^3 (աղ.3):

Աղյուսակ 3. Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը,լուծված թթվածնի պարունակություն և պերմանգանատային օքսիդացման արժեքը Կարճաղբյուր գետի տարբեր հատվածների ջրերում

02.06.2026թ.

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների քանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հզ. ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO_2/դմ^3,	Պերմանգան ատային օքսիդացում, մգO/դմ^3
	20°C	37°C			
Մինչ Կարճաղբյուր գյուղ մտնելը	1450	240	1,4	9,5	2,9
Գետաբերան	3100	2900	20	8,6	3

Գետաբերան- գետը, հոսելով համանուն գյուղի միջով ենթարկվում է աղտոտման ֆեկալ-տնտեսական և գյուղատնտեսական հոսքաջրերով աղտոտման, որի արդյունքում դիտակետի ջրերում՝ նախորդ դիտակետի համեմատ արձանագրվել է մանրէների թվաքանակի աճ՝ հատկապես մեզոֆիլ սապրոֆիտ մանրէների և աղիքային ցուպիկների: Այսպես, 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 3100 ԳԱՄ/մլ և 2900 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 20 հզ.ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 4 անգամ: Նվազել է ինքնամաքրման գործընթացի ինտենսիվությունը (1): Նվազել է նաև ջրում լուծված թթվածնի պարունակությունը՝ կազմելով 8,6 մգO_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը գրեթե չի փոփոխվել:

Գետ Վարդենիկ

Վերին հոսանք (ՀԷԿ-ի հարևանությամբ) - 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված ապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 450 ԳԱՄ/մլ և 30 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 0.05 հզ.ԳԱՄ/լ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը կազմել է 15: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը եղել է 10.5 մգO_2/դմ^3, իսկ պերմանգանատային օքսիդացման արժեքը՝ 2.1 մգO/դմ^3 (աղ.4.):

Աղյուսակ 4. Սապրոֆիտ մանրէների քանակը, կոլի-ինդեքսը,ջրում լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը Վարդենիկ գետի տարբեր հատվածների ջրերում

02.06.2026թ.

Դիտակետ	Սապրոֆիտ մանրէների թվաքանակ, ԳԱՄ/մլ		Կոլի-ինդեքս, հազ. ԳԱՄ/լ	Լուծված թթվածին, մգO_2/դմ^3,	Պերմանգան ատային օքսիդացում, մգO/դմ^3
	20°C	37°C			
Վերին հոսանք (ՀԷԿ-ի մոտ)	450	30	0.05	10	2.1
Վարդենիկ համայնքի ֆեկալ-կենցաղային հոսքաջրերի մուտքից մոտ 100մ ներքև	3800	300	25	10.5	2.1
Գետաբերան	-	220	10	9,6	1,9

Վարդենիկ համայնքի ֆեկալ-տնտեսական հոսքաջրերի մուտքից մոտ 100մ ներքև- հոսքաջրերը, անարգել թափվելով գետը, այն ենթարկում են խիստ աղտոտման, ինչի արդյունքում վերին հոսանքի համեմատ արձանագրվել է մանրէների քանակական բարձր արժեքներ: Այսպես 20°C և 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակը համապատասխանաբար կազմել է 3800 ԳԱՄ/մլ և 300 ԳԱՄ/մլ, իսկ կոլի-ինդեքսը՝ 25 հզ. ԳԱՄ/լ, ինչը ՍԹԿ-ն գերազանցել է 5 անգամ: Մանրէների միջոցով կատարվող ինքնամաքրման արժեքը նվազել է կազմելով 12: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը գրեթե չի փոփոխվել:

Գետաբերան –ուսումնասիրության արդյունքում պարզվել է, որ գետի ջրի ինքնամաքրման շնորհիվ հետազոտված մանրէների թվաքանակը նախորդ դիտակետի համեմատ նվազել է՝ հատկապես աղիքային ցուպիկները: Այսպես, 37^{0}C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մարէների թվաքանակը կազմել է 220 ԳԱՄ/լ, իսկ կոլի-ինդեքսի արժեքը՝ 10 հզ. ԳԱՄ/լ, որը ՍԹԿ-ն գերազանցել է 2 անգամ: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը և պերմանգանատային օքսիդացման արժեքը գրեթե չի փոփոխվել:

Այսպիսով, ուսումնասիրությունների արդյունքներից պարզ է դարձել, որ գետերը բնակավայրերի տարածքներով հոսելիս ենթարկվում են ֆեկալ-տնտեսական և անասնապահական հոսքաջրերով խիստ աղտոտման: Մանրէներով առավել աղտոտված են եղել հոսքաջրերի մուտքի և գետաբերանի հատվածները:

Նախորդ տարիների համեմատ՝ ուսումնասիրված գետերի ջրերում մանրէների տարածական բաշխվածության պատկերը գրեթե չի փոխվել, ինչը պայմանավորված է կեղտաջրերի մշտական հոսքով:

Սապրոֆիտ մանրէների միջոցով տեղի ունեցող ինքնամաքրման գործընթացի ինտենսիվությունը բարձր է գնահատվել Ձկնագետ, Վարդենիկ և Կարճաղբյուր

գետերի վերին հոսանքի դիտակետերում (6-44): Աղտոտվածության մակարդակի բարձրացմանը զուգահեռ, բացառությամբ Դրախտիկ գետի, նվազել է ինքնամաքրման գործընթացի ինտենսիվությունը (1-12): Ամենացածր ինքնամաքրման արժեք գրանցվել է Կարճաղբյուր գետի գետաբերանի դիտակետում:

Հետազոտված գետերի գետաբերանի, ինչպես նաև Վարդենիկ և Ձկնագետ գետերի ֆեկալ-կենցաղային հոսքաջրերի մուտքի հատվածներում ընդհանուր կոլիֆորմ բակտերիաները ռեկրեացիոն նպատակով օգտագործվող ջրերի՝ ՀՀ առողջապահության նախարարության սահմանած չափաքանակը (500 ԳԱՄ/100մլ) գերազանցել են 2-5 անգամ:

Համաձայն Վ. Դ. Ռոմանենկոյի՝ (Романенко и др.,1990) մակերևույթային ջրերի որակի էկոլոգասանիտարական գնահատման, ըստ կոլի-ինդեքսի արժեքների՝ուսումնասիրված գետերի վերին հոսանքներում ջուրը գնահատվել է «մաքուր»: Գետաբերանի հատվածներում Ձկնագետ, Կարճաղբյուր և Դրախտիկ գետերի ջրերը դասվել են «չափավոր աղտոտված», իսկ Վարդենիկը՝ «թույլ աղտոտված» ջրերի շարքում:

Համաձայն Ժ.Պ. Ամբրազենի (Амбразене, 1974) դասակարգման՝ ըստ 37°C ջերմաստիճանում աճեցված սապրոֆիտ մանրէների թվաքանակի՝ ուսումնասիրված գետերի վերին հոսանքների ջրերը դասվել են «մաքուր» ջրերի դասին: Ձկնագետ և Դրախտիկ գետերի գետաբերանի հատվածներում ջուրը դասվել է «թույլ աղտոտված», Կարճաղբյուր գետը՝ «չափավոր աղտոտված», իսկ Վարդենիկը՝ «մաքուր» ջրերի դասին:

Պերմանգանատային օքսիդացման արժեքը ուսումնասիրված գետերի ջրերում փոփոխվել է 1.9-7 մգO/դմ^3 սահմաններում: Առավել բարձր արժեքներ են արձանագրվել Ձկնագետ և Դրախտիկ գետերում՝ պայմանավորված գարնանային վարարումներով: Ջրում լուծված թթվածնի պարունակությունը փոփոխվել է 8.6-10.9 մգO_2/դմ^3:

Փոքր Սևանի ռեկրեացիոն գոտիների ջրերի սանիտարական վիճակի գնահատումն ըստ ընդհանուր կոլիֆորմ բակտերիաների թվաքանակի

2026թ. հունիսի վերջին տասնօրյակում՝ մինչև հանգստի ակտիվ սեզոնի սկսվելը, կատարած ուսումնասիրությունների արդյունքում կոլիֆորմ բակտերիաներ հայտնաբերվել են բոլոր փորձանմուշներում, իսկ կոլի-ինդեքսը (աղիքային ցուպիկների խմբի մանրէների քանակը 1լ) փոփոխվել է 50-1600 ԳԱՄ/Լ սահմաններում (աղ.1):

Աղյուսակ 1. 2026 հունիս ամսին փոքր Սևանի հիմնական լողափերի ջրերում գրանցված կոլի-ինդեքսի արժեքները

Լողափ	Կոլի-ինդեքս, ԳԱՄ/լ
Հանրային թիվ 1	250
Հանրային թիվ 2	50
Հանրային թիվ 3	50
Թերակղզու լողափ	50

«Սեմոյի մոտ» ռեստորանային համալիրի հարակից տարածք	1600

Համեմատաբար բարձր արժեքը արձանագրվել է «Սեմոյի մոտ» ռեստորանային համալիրի հարակից տարածքում, ինչը հավանաբար պայմանավորված է համալիրի տարածքում գործող կեղտաջրերի կենսաբանական մաքրման կայանի արտահոսքով:

ՈՒսումնասիրված բոլոր լողափերում գրանցված կոլիֆորմ բակտերիաների արժեքները չեն գերազանցել ՀՀ առողջապահության նախարարության կողմից սահմանված նորմը (5000 ԳԱՄ/լ):

Լողափերի ջրերը համաձայն Փ. Դ. Ռոմանեկոյի (Романеко, 1990) մակերևութային ջրերի էկոլոգիասանիտարական դասակարգման, ըստ կոլի-ինդեքսի արժեքների, համապատասխանել են «մաքուր»-«բավարար մաքուր» (II-III դաս) ջրերի դասին:

Արդյունագործական ձկնորսություն

Առաջին եռամսյակ - ՀՀ կառավարության 2026 թվականի փետրվարի 5-ի № 120-Ն որոշման համաձայն սահմանվել է Սևանա լճից սիգի արդյունագործական որսի 550 տոննա չափաքանակ՝ 2026 թվականի փետրվարի 6-ից մինչև նոյեմբերի 20-ն ընկած ժամանակահատվածի համար: Համաձայն Կառավարության 2019 թվականի նոյեմբերի 21-ի N1667-Ն որոշման՝ Սևանա լճում սիգ ձկնատեսակի արդյունագործական նպատակներով որս իրականացնելու համար: 2026 թվականի փետրվարի 5-ին լիազոր մարմնի և 7 կազմակերպությունների ու «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև կնքվել են Սևանա լճում սիգ ձկնատեսակի արդյունագործական նպատակներով որս իրականացնելու իրավունքի թույլտվության պայմանագրեր:

ՇՄՆ-ի հետ կնքված պայմանագրերով 2026 թվականի փետրվարի 9-ից մինչև մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում 7 կազմակերպությունների կողմից՝ (ներառյալ ՊՈԱԿ-ը) 742 ձկնորսների միջոցով Սևանա լճում արդյունագործական նպատակով իրականացվել է ձկան որս՝ մուտքի 24 կետերից, որի ընթացքում որսվել է ընդհանուր 106573 կգ սիգ տեսակի ձուկ:

ՊՈԱԿ-ի և շրջակա միջավայրի նախարարության միջև կնքված պայմանագրով 433 ձկնորսների կողմից 2026 թվականի փետրվարի 9-ից մինչև մարտի 31-ն ընկած ժամանակահատվածում որսվել է 25027 կգ սիգ տեսակի ձուկ:

Երկրորդ եռամսյակ - 2026 թվականի փետրվարի 5-ին լիազոր մարմնի և 7 կազմակերպությունների ու «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև կնքված պայմանագրերով 2026 թվականի երկրորդ եռամսյակում 7 կազմակերպությունների կողմից՝ (ներառյալ ՊՈԱԿ-ը) 756 ձկնորսների միջոցով Սևանա լճում արդյունագործական նպատակով իրականացվել է ձկան որս՝ մուտքի 24 կետերից, որի ընթացքում որսվել է ընդհանուր 272315 կգ սիգ տեսակի ձուկ:

ՊՈԱԿ-ի և շրջակա միջավայրի նախարարության միջև կնքված պայմանագրով 439 ձկնորսների կողմից 2026 թվականի երկրորդ եռամսյակում որսվել է 78971 կգ սիգ տեսակի ձուկ:

Կառավարության N 120-Ն որոշմամբ սահմանված Սևանա լճում սիգ ձկնատեսակի արդյունագործական որսի 550 տոննա տարեկան չափաքանակից

220,830 կգ մնացորդի համար 2026 թվականի ապրիլի 29-ին ՇՄՆ-ի կողմից հայտարարվել էր արդյունագործական որսի նոր հայտերի ընդունում, որի հիման վրա 2026 թվականի մայիսի 22-ին ՇՄՆ-ի և 6 կազմակերպությունների մեջ, ներառյալ ՊՈԱԿ-ը, կնքվել են պայմանագրեր: 2026 թվականի հունիսի 1-ից մինչև հունիսի 30-ն ընկած ժամանակահատվածում մուտքի 6 կետերից, 12 ձկնորսի կողմից իրականացվել է 485 կգ սիգ տեսակի ձկան որս:

Կադաստրի վարում.

Առաջին եռամսյակ - Հիմք ընդունելով «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի մոտ կայացած գործակարգավարական խորհրդակցության №2 արձանագրության հանձնարարականը իրականացվում են ստուգայացեր դադարեցված պայմանագրերի տարածքներ՝ փաստացի տիրապետման և գույքով ծանրաբեռնվածության փաստը ստուգելու նպատակով: Ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքվել են կառուցապատման և/կամ վարձակալության 1 նոր պայմանագիր, 9 համաձայնագրեր՝ վարձավճարի փոփոխության, ժամկետի երկարացման և մակերեսի փոփոխման, 20 հողօգտագործողների պայմանագրային փաթեթներում կատարվել են տվյալների փոփոխություն, 7 պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցումը դադարեցվել է: Կատարված փոփոխությունները փոխանցվել են տվյալների բազա:

Հողօգտագործողների կողմից տարբեր խնդրանքներով (ներդրումային ծրագրեր իրականացնելու, հողամասը օտարելու, նոր պայմանագրեր կնքելու, հողամասը ենթավարձակալությամբ տրամադրելու, գույքի բաժանում կատարելու և այլն) ՊՈԱԿ ներկայացրած դիմումները քննարկվել են ՊՈԱԿ-ի խորհրդի նիստում և դրանց տրվել է համապատասխան ընթացք:

Երկրոդ եռամսայկում Ֆիզիկական և իրավաբանական անձանց հետ կնքվել են կառուցապատման և/կամ վարձակալության 6 համաձայնագրեր՝ վարձավճարի փոփոխության, 1 համաձայնագիր ժամկետի երկարացման և 2-ը մակերեսի փոփոխման, 11 հողօգտագործողների պայմանագրային փաթեթներում կատարվել են տվյալների փոփոխություն, 6 պայմանագրից ծագող իրավունքի պետական գրանցումը դադարեցվել է: Կատարված փոփոխությունները փոխանցվել են տվյալների բազա:

Հողօգտագործողների կողմից տարբեր խնդրանքներով (ներդրումային ծրագրեր իրականացնելու, հողամասը օտարելու, նոր պայմանագրեր կնքելու, հողամասը ենթավարձակալությամբ տրամադրելու, գույքի բաժանում կատարելու և այլն) ՊՈԱԿ ներկայացրած դիմումները քննարկվել են ՊՈԱԿ-ի խորհրդի նիստում և դրանց տրվել է համապատասխան ընթացք:

Պարկի տարածքում անտառտնտեսական աշխատանքներ.

Առաջին եռամսյակ - Համաձայն Կառավարության 2024 թվականի փետրվարի 29-ի ՀՀ կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի № 1045-Ն և 2015 թվականի սեպտեմբերի 17-ի № 1072-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» № 294-Ն որոշման 4-րդ մասի՝ էկոպարեկային ծառայության աշխատակիցների մասնակցությամբ իրականացվել են 2025 թվականին սանիտարական հատումների նպատակով հատկացված բոլոր

հատատեղերի և դրանց հարակից 50 մետր շառավղով անտառաշերտերի տեղազննման աշխատանքները:

Հատատեղերի տեղազննման աշխատանքների արդյունքում կազմվել են հատատեղերի տեղազննման ակտեր:

2025 թվականին նշանակվել էր թվով 45 ընտրովի սանիտարական հատման հատատեղ:

Ընտրովի սանիտարական հատման նպատակով՝ №000020, №000021, №000022, №000026 №000027, №000028, №000029, №000030, №000031, №000032, №000033, №000034, №000035, №000036, №000037, №000038, №000039, №000040, №000041, №000042, №000043, №000044, №000045, №000046, №000055 և №000060 անտառհատման տոմսերով շահագործվել (հատում, քարշակում և բնափայթի դուրսբերում) և աշխատանքներն ամբողջությամբ ավարտվել են 26 հատատեղերում:

«Սևան» ազգային պարկի Վարդենիկ տեղամասում № 000041 անտառհատման տոմսով նշանակված հատատեղի շրջակայքում տեղազննման ժամանակ հայտնաբերվել է 12 սոճի տեսակի տարբեր տրամաչափի կոճղեր, որոնք ապօրինի հատված են եղել անհայտ անձանց կողմից: Հատված կոճղերն արձանագրվել են տեղազննում իրականացնող էկոպարեկային ծառայության մասնակիցների կողմից և դրանց համապատասխան ընթացք տալու համար ուղարկվել է Ոստիկանություն:

2025 թվականին սանիտարական հատումներ իրականացնելու նպատակով հատկացված հատատեղերից չի շահագործվել № 000024, № 000025, № 000047, № 000048, №000049, №000050, №000051, №000052, №000053, №000054, №000056, №000057, №000058, №000059, №000061, №000062 և №000064 անտառհատման տոմսերով նշանակված 17 հատատեղ և ամբողջ ծավալը թերհատ է: №000063 և №000023 անտառհատման տոմսերով նշանակված հատատեղերում ծառերը հատվել են մասամբ:

2025 թվականին հատկացված հատատեղերում չհատված՝ հատման ենթակա ծառերի ծավալը կազմում է 305,705 խիտ/խմ, որից շինափայտ՝ 25,02 խմ, վառելափայտ՝ 263,1388 խիտ/խմ, ցախ և ճյուղիկներ՝ 17,5462 խիտ/խմ: Հատատեղերի հատկացման կարգի հատատեղերի տեղազննման (4-րդ գլուխ) 36-րդ կետի համաձայն հատատեղերում թերհատումների շահագործումն իրականացնելու նպատակով վերը նշված անտառհատման տոմսերի ժամկետները երկարաձգելու համար, «Սևան» ազգային պարկի ՊՈԱԿ-ը դիմել է շրջակա միջավայրի նախարարություն: Նշված ծավալը կհատվի 2026 թվականի համար հատկացված հատատեղերի հետ միասին: Համաձայն 2026 թվականին նախատեսվող ընտրովի սանիտարական հատումների մասին 2026 թվականի հունվարի 5-ի №1-Լ հրամանով հաստատված թվով 35 հատատեղերի համար դուրս են գրվել անտառահատման տոմսեր:

Սևան և Ախթամար տեղամասերի համար №000073, №000074, №000075, №000076, №000077, №000078, №000079, №000080, №000081, №000082 ընդհամենը՝ 63,076 խիտ/խմ, որից շինափայտ՝ 5,48 մ^3, վառելափայտ՝ 53,89737 խիտ/խմ, ցախ և ճյուղիկներ՝ 3,69863 խիտ/խմ ծավալ:

Նորատուս և Այրիվան տեղամասերի համար №000083, №000084, №000085, №000086, №000087, №000088, №000089, №000090 ընդհամենը՝ 125,554 խիտ/խմ, որից շինափայտ՝ 24,49 մ^3, վառելափայտ՝ 92,5189 խիտ/խմ, ցախ և ճյուղիկներ՝ 8,5451 խիտ/խմ ծավալ:

Մարտունի և Երանոս տեղամասերի համար №000091, №000092, №000093, №000094, №000095, №000096, №000097, №000098, №000099 ընդհամենը՝ 270,527 խիտ/խմ, որից շինափայտ՝ 17,942 մ³, վառելափայտ՝ 238,2726 խիտ/խմ, ցախ և ճյուղիկներ՝ 14,3124 խիտ/խմ ծավալ:

Վարդենիս, Ծովակ և Փամբակ տեղամասերի համար №000065, №000066, №000067 ընդհամենը՝ 24,155 խիտ/խմ, որից շինափայտ՝ 0,72 մ³, վառելափայտ՝ 22,173 խիտ/խմ, ցախ և ճյուղիկներ՝ 1,262 խիտ/խմ ծավալ:

Արտանիշ և Դրախտիկ տեղամասերի համար №000068, №000069, №000070, №000071, №000072 ընդհամենը՝ 21,369 խիտ/խմ, որից շինափայտ՝ 0,1 մ³, վառելափայտ՝ 20,1992 խիտ/խմ, ցախ և ճյուղիկներ՝ 1,0698 խիտ/խմ ծավալ:

Նշված ծավալի հատման աշխատանքները նախատեսվում է սկսել երկրորդ եռամսյակում:

Երկրորդ եռամսյակ - 2025 թվականին սանիտարական հատումներ իրականացնելու նպատակով հատկացված հատատեղերից չշահագործված № 000024, № 000025, № 000047, № 000048, №000049, №000050, №000051, №000052, №000053, №000054, №000056, №000057, №000058, №000059, №000061, №000062 և №000064 անտառհատման տոմսերը «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնօրենի 2026 թվականի ապրիլի 21-ի №97-Լ հրամանով մթերման աշխատանքները երկարաձգվել են և նշանակված 17 հատատեղերի ամբողջ թերհատ ծավալներից հատվել են №000025, №000059, №000061, №000062, №000064, անտառհատման տոմսերով նախատեսված ամբողջ ծավալները:

Համաձայն 2026 թվականին ընտրովի սանիտարական հատումների մասին 2026 թվականի հունվարի 5-ի №1-Լ հրամանով հաստատված թվով 35 հատատեղերից երկրորդ եռամսյակում շահագործվել է Սևան, Ախթամար և Այրիվանի տեղամասերում №000073, №000074, №000075, №000076, №000077, №000078, №000080, №000081, №000082, №000083, №000087, №000088, №000089 անտառհատման տոմսերով ամբողջ ծավալները հատվել են և առաջացած փայտանյութը կուտակվել է հատատեղերում: Նշված հատատեղերի շահագործման արդյունքում հատատեղերում կուտակված փայտանյութի ծավալները թերհատ հատատեղերի շահագործումից առաջացած փայտանյութի ծավալների հետ միասին կազմում են 294,135 խմ (պահեստային), որից շինափայտ՝ 31,58 խմ, տեխնոլոգիական փայտ՝ 20,5 խմ (պահեստային), վառելափայտ 211,94 խմ (պահեստային) և ցախ/ճյուղիկներ՝ 30,115 խմ (պահեստային): Նշված ծավալի փայտանյութի շուրջ 80 %-ն արդեն իսկ իրացվել է հատատեղերից: Նախատեսված հատման աշխատանքները և հատատեղերում կուտակված փայտանյութի իրացման աշխատանքները շարունակվում են սահմանված կարգով:

2026 թվականի երկրորդ եռամսյակում կատարվել են 2025 թվականին «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Սևան տարածքի Ախթամար տեղամասում իրականացված անտառվերականգնման նպատակով տնկված ծառերի խնամքի աշխատանքներ՝ սերմնաբուսակների շրջակայքում հողի փխրեցում և մոլախոտերի հեռացում, բաժակների տրամագիծը՝ 0,5 մ և ձեռքով խոտհնձի աշխատանքներ՝ ձեռքով խոտհունձ, խոտի հավաքում և հեռացում: Աշխատանքներն ընթացքի մեջ են:

ՊՈԱԿ-ի Մարտունու տնկարանում դրվել են շուրջ 13000 բարդի և ուռենի տեսակի կտրոններ: Ներկայումս տնկարանում խնամվում է շուրջ 25 000 տնկիներ:

«Սևան» ազգային պարկի տարածքին սահմանակից համայնքների բնակչության շրջանում բացատրական աշխատանքների իրականացում, այցելուների կենտրոնի և տարածքի այցելուներին տեղեկատվության տրամադրում.

Առաջին եռամսյակ - 2026թ առաջին եռամսյակի ընթացքում «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոնում կազմակերպվել են հետևյալ միջոցառումները.

- «ՍԱՊ էկոտուրիստական հարթակ» սեմինար, «Ալպյան մարգագետիններ» սեմինար-քննարկում,
- «Սևանա լճի էկոլոգիան» ֆիլմի դիտում քննարկում,

«Թռչունների բնադրավայրեր» էքսկուրսիա այցելուների կենտրոնում,

- «Կրծողներ» էքսկուրսիա այցելուների կենտրոնում:

Այցելուների կենտրոնը առաջին եռամսյակի ընթացքում ունեցել է 544 այցելու, որից 200 միջոցառման մասնակիցների թիվն է:

Երկրորդ եռամսյակ - 2026 թվականի երկրորդ եռամսյակի ընթացքում ՊՈԱԿ-ի Այցելուների կենտրոնում կազմակերպվել են հետևյալ միջոցառումները.

- «Երկիր մոլորկան այսօր» թեմայով սեմինար – քննարկում,
- Թանգարանների միջազգային օր - Հ. Իգիթյանի անվան գեղագիտական կենտրոնի Սևանի մասնաճյուղի սաների աշխատանքների ցուցահանդես «Խաղաղություն» վերնագրով,
- Կենսաբազմազանության միջազգային օր - «Սևան» ազգային պարկի կենդանական աշխարհը» սեմինար – քննարկում,
- Շրջակա միջավայրի համաշխարհային օր – «Պահպանել բնությունը աղտոտվածությունից» սեմինար, ֆիլմի դիտում՝ «Սևան. Հայաստանի զավթված գեղեցկուհին»,
- Թեման – «Վայրի գազաններ» (ծանոթացնել բնության մեջ հանդիպող գազաններին) «Բանիմաց» ուսումնական կենտրոնի սաների մասնակցությամբ:

Երկրոդ եռամսայկում Այցելուների կենտրոնն ունեցել է 1371 այցելու, որից 730-ը միջոցառման մասնակիցներն են:

2. Մշտադիտարկման բաժին.

Առաջին կիսամյակ-Բաժնի աշխատողների կողմից կազմվել են զեկուցագրեր որոնցից 52-ը ներկայացվել է շրջակա միջավայրի նախարարության Էկոպարեկային ծառայություն և համապատասխան համայնքներ՝ հարցին համապատասխան ընթացք տալու համար: Կիսամյակի ընթացքում բաժնի աշխատակիցների կողմից «Սևան» ազգային պարկի տարածքում 1905.0 մետր բացարձակ նիշից ներքև ընկած հատվածներում իրականցվել են տեղազննումներ, ինչի արդյունքում բաժնի աշկատակիցների մասնակցությամբ ապամոնտաժվել են նիշից ներքև թվով 175 շենք-շինություն:

Պարբերաբար իրականացվել են շրջայցեր «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Նորաշենի արգելոց-արգելավայրեր: Տեղում, մշտադիտարկման արդյունքում,

հնարավորինս կանխվել են հնարավոր խնդիրները և կանոնակարգվել է ռեժիմի պահանջները:

Առաջին կիսամյակի ընթացքում ՊՈԱԿ-ի հողաշինարարի կողմից՝ իրականացվել է ՊՈԱԿ-ի վարձակալների կողմից վարձակալված տարածքների սահմանների ճշտման աշխատանքներ: Կատարվել է քաղաքացիների կողմից ՊՈԱԿ մուտքագրված դիմումներին կից իրադրության հատակագծերի ուսումնասիրություն:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն ՊՈԱԿ-ի կողմից ստացված գրությունների հիման վրա հողաշինարարը մասնակցել է մի շարք շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հայտերի հանրային լսումների, ինչպես նաև համապատասխան համայնքների ներկայացուցիչների հետ իրականացրել է ուսումնասիրություններ «Սևան» ազգային պարկի տարածքներում:

3. Իրավական ապահովման բաժին.

Առաջին եռամսյակ - ՊՈԱԿ է ստացվել 593 գրություն, որից 176-ը՝ շրջակա միջավայրի նախարարությունից, 417-ը՝ այլ իարավաբանական և ֆիզիկական անձանցից: Նշված գրությունները Գործավարության կարգին համապատասխան ժամանակին և պատշաճ ձևով մուտքագրվել են գրանցամատյաններում, այնուհետև հանձնվել են տնօրենին՝ մակագրության: Մակագրված գրությունները պատճենահանվել են և հանձնվել են համապատասխան բաժիններ: Իրականացվել է հսկողություն դրանց՝ սահմանված ժամկետներում պատասխանելու ուղղությամբ: Ելքագրվել է 824 գրություն, որից 112-ը՝ շրջակա միջավայրի նախարարություն:

Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով պատրաստվել են տարաբնույթ դիմումներ և գրություններ:

Երկրորդ եռամսյակ- ՊՈԱԿ է ստացվել 856 գրություն, որից 155-ը՝ շրջակա միջավայրի նախարարությունից, 701-ն՝ այլ իարավաբանական և ֆիզիկական անձանցից: Նշված գրությունները Գործավարության կարգին համապատասխան ժամանակին և պատշաճ ձևով մուտքագրվել են գրանցամատյաններում, այնուհետև հանձնվել են տնօրենին՝ մակագրության: Մակագրված գրությունները պատճենահանվել են և հանձնվել են համապատասխան բաժիններ: Իրականացվել է հսկողություն դրանց՝ սահմանված ժամկետներում պատասխանելու ուղղությամբ: Ելքագրվել է 633 գրություն, որից 72-ը՝ շրջակա միջավայրի նախարարություն:

Աշխատանքային անհրաժեշտությունից ելնելով պատրաստվել են տարաբնույթ դիմումներ և գրություններ:

Մարդկային ռեսուրսների կառավարում. **Առաջին եռամսյակ** - Կնքվել է 2 աշխատանքային պայմանագիր, կազմվել է 79 անհատական/ներքին իրավական ակտեր, որից՝ 2-ն աշխատանքային պայմանագիրը լուծելու, 2-ը խրախուսելու, 6-ը լրավճար սահմանելու, 30-ն արձակուրդ տրամադրելու, որից 28-ը նվազագույն ամենամյա արձակուրդ, 2-ը չվճարվող, 20-ն աշխատողին գործուղելու, 19-ն այլ ներքին իրավական ակտերի վերաբերյալ: ՊՈԱԿ-ում աշխատանքի է ընդունվել 2 մարդ, աշխատանքից ազատվել է 2 մարդ:

Երկրորդ եռամսյակ - Կնքվել է 7 աշխատանքային պայմանագիր, կազմվել է 109 անհատական/ներքին իրավական ակտեր, որից՝ 5-ն աշխատանքային պայմանագիրը լուծելու, 38-ը խրախուսելու, 2-ը լրավճար սահմանելու, 26-ը

նվազագույն ամենամյա արձակուրդ տրամադրելու, 20-ն աշխատողին գործուղելու, 19-ն այլ ներքին իրավական ակտերի վերաբերյալ: ՊՈԱԿ-ում աշխատանքի է ընդունվել 7 մարդ, աշխատանքից ազատվել է 5 մարդ:

Իրավաբան.

Առաջին եռամսյակ

Պայմանագրերով սահմանված պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար 2 Վարձակալի ներկայացվել է պայմանագրերը լուծելու առաջարկներ:

Կազմվել են 69 ծանուցումներ, որից 10-ը՝ ավել զբաղեցրած տարածքներն ապօրինի տիրապետումից ազատելու, 10-ը՝ կադաստրային արժեքների բարձրացման հետ կապված վարձավճարների փոփոխման, 25-ը՝ տարածքում առկա ինքնակամ կառույցներն ապամոնտաժելու և տարածքն ապօրինի տիրապետումից ազատելու, 14-ը՝ պայմանագրի ժամկետը ՀՀ կառավարության №1563-Ն որոշման պահանջներին համապատասխանեցնելու, 10-ը՝ պայմանագրով սահմանված վարձավճարը ՊՈԱԿ-ի խորհրդի 2025 թվականի ապրիլի 14-ի №4.6 որոշմամբ սահմանված գնին համապատասխանեցնելու վերաբերյալ:

Կազմվել է 6 պայմանագրեր, որից 1-ը՝ անասունների արածեցման, 5-ը՝ Սևան, Վարդենիս, Գավառ, Ճամբարակ և Մարտունի համայնքներում բնապահպանական ծրագրերի իրականացման վերաբերյալ:

Մշակվել և հաստատման է ներկայացվել ՊՈԱԿ-ի 2026 թվականի քաղաքացիական պաշտպանության պլանը:

Կազմակերպվել է ՊՈԱԿ-ի խորհրդի հարցման կարգով 6 նիստ:

ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ են ներկայացվել՝

1) 20 հայցադիմում, ընդհանուր՝ 55 722 377 դրամ հայցագնով, որից 18-ը գումարի բռնագանձման պահանջով, 1-ը՝ գումարի բռնագանձման և պայմանագրի լուծման պահանջով, 1-ը՝ պայմանագրի լուծման և գրանցված իրավունքի դադարեցման պահանջով:
2) 1 դիմում կատարողական թերթը հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացնելու մասին,
3) 5 դիմում վեճն ըստ էության սպառված լինելու վերաբերյալ,
4) 2 քաղաքացիական գործով ապացույց,

ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան է ներկայացվել՝

1 քաղաքացիական գործով վերաքննիչ բողոք,

ՀՀ սնանկության դատարան է ներկայացվել

2 դիմում պահանջատեր գրանցելու վերաբերյալ:

ՀՀ Վարչական դատարան է ներկայացվել

2 հայցադիմում՝ վարչական ակտերն անվավեր ճանաչելու պահանջով:

Կազմվել են շուրջ 60 գրություններ և գրությունների/դիմումների պատասխաններ:

Մասնակցություն 10 քաղաքացիական և քրեական գործերով դատական նիստերի:

Երկրորդ եռամսյակ - Պայմանագրերով սահմանված պարտավորությունները ոչ պատշաճ կատարելու համար 9 Վարձակալի ներկայացվել է պայմանագրերը լուծելու առաջարկներ:

Կազմվել են 8 ծանուցումներ, որից 3-ը՝ պայմանագրերի ժամկետի ավարտման հիմքով պայմանագրերը լուծելու, 3-ը՝ կադաստրային արժեքների բարձրացման հետ կապված վարձավճարների փոփոխման, 2-ը՝ ՀՀ հողային օրենսգրքի 118-րդ հոդվածի 4-րդ մասի հիմքով վարձավճարի վճարման վերաբերյալ:

ՀՀ հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում հրապարակվել են 6 ծանուցումներ՝ կադաստրային արժեքների բարձրացման հետ կապված վարձավճարների փոփոխման վերաբերյալ:

Կազմվել է 145 պայմանագրեր, որից 105-ը՝ անասունների արածեցման, 4-ը՝ խոտհունձի, 27-ը՝ փեթակի տեղադրման, 2-ը՝ աղբամանի, 3-ը՝ պառկելաթախտի, 1-ը՝ պառկելաթախտի և աղբամանի վարձակալության, 2-ը՝ ջրային լողամիջոցի շահագործման վերաբերյալ:

Կազմվել է 8 համաձայնագրեր՝ պայմանագրում փոփոխություն կատարելու վերաբերյալ:

Կազմվել և հրապարակվել է հանրային լողափերի մրցույթի հայտարարությունների տեքստը:

Կազմակերպվել է ՊՈԱԿ-ի խորհրդի 1 նիստ:

ՀՀ ընդհանուր իրավասության առաջին ատյանի դատարաններ են ներկայացվել՝

1) 6 հայցադիմում, ընդհանուր՝ 5 143 588 դրամ հայցագնով, որից 5-ը գումարի բռնագանձման պահանջով, 1-ը՝ գումարի բռնագանձման և պայմանագրի լուծման պահանջով:
2) 3 դիմում կատարողական թերթը հարկադիր կատարումն ապահովող ծառայություն ներկայացնելու մասին,
3) 1 քաղաքացիական գործով ապացույց,
4) 1 քաղաքացիական գործով պատասխանողի ներկայացրած հայցային վաղեմության միջնորդության դեմ առարկություն:

ՀՀ վճռաբեկ դատարան է ներկայացվել՝

1 քաղաքացիական գործով վճռաբեկ բողոք:

Կազմվել են շուրջ 40 գրություններ և գրությունների/դիմումների պատասխաններ:

Մասնակցություն 12 քաղաքացիական և քրեական գործերով դատական նիստերի:

4. Ֆինանսատնտեսագիտական բաժին.

Առաջին եռամսյակ

Համաձայն շրջակա միջավայրի նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2026 թվականի փետրվարի 4-ին կնքված N ՇՄՆ-ԴՇ-26/03 պայմանագրի՝ պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման համար 2026 թվականի առաջին եռամսյակում ՊՈԱԿ-ին փաստացի տրամադրվել է 21183,8 հազար ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), որը ուղղվել է ՊՈԱԿ-ի աշխատակիցների վարձատրությանը:

Երկրորդ եռամսյակ

Համաձայն շրջակա միջավայրի նախարարության և ՊՈԱԿ-ի միջև 2026 թվականի փետրվարի 4-ին կնքված N ՇՄՆ-ԴՇ-26/03 պայմանագրի՝ պարկում գիտական ուսումնասիրությունների, անտառտնտեսական աշխատանքների կատարման համար 2026 թվականի երկրորդ եռամսյակում ՊՈԱԿ-ին փաստացի տրամադրվել է 36012,9 հազար ՀՀ դրամ (ներառյալ ԱԱՀ), որը ուղղվել է ՊՈԱԿ-ի աշխատակիցների վարձատրությանը:

Գանձումներ. Առաջին եռամսյակ - Պարբերաբար վարձակալները հեռախոսազանգով տեղեկացվել են իրենց վարձավճարների մասին, կազմվել են շուրջ 336 ծանուցումներ՝ «Պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության և/կամ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» իրավաբանական կամ ֆիզիկական անձանց միջև կնքված պայմանագրերով նախատեսված վարձավճարների վերաբերյալ, որի արդյունքում հողի վարձավճարներից մուտքը կազմել է 78699,0 հազար ՀՀ դրամ:

Երկրորդ եռամսյակ - Պարբերաբար վարձակալները հեռախոսազանգով տեղեկացվել են իրենց վարձավճարների մասին, կազմվել են շուրջ 313 ծանուցումներ՝ «Պետական սեփականություն հանդիսացող հողամասի վարձակալության և/կամ կառուցապատման իրավունքի տրամադրման մասին» իրավաբանական կամ ֆիզիկական անձանց միջև կնքված պայմանագրերով նախատեսված վարձավճարների վերաբերյալ, որի արդյունքում հողի վարձավճարներից մուտքը կազմել է 75060,6 հազար ՀՀ դրամ:

Գնումներ. Առաջին եռամսյակ - ՊՈԱԿ-ի կարիքների համար ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու նպատակով կազմակերպվել են 11 ընթացակարգ, որից՝ 8-ը մեկ անձ, 3-ը՝ գնանշման հարցում: Կազմակերպված ընթացակարգերի արդյունքում կնքվել են 10 պայմանագրեր:

Երկրորդ եռամսյակ - ՊՈԱԿ-ի կարիքների համար ապրանքներ և ծառայություններ ձեռք բերելու նպատակով կազմակերպվել են 16 ընթացակարգ, որից՝ 6-ը մեկ անձ, 4-ը՝ գնանշման հարցում: Կազմակերպված ընթացակարգերի արդյունքում կնքվել են 6 պայմանագրեր:

5. Տնտեսական սպասարկման բաժին.

Առաջին եռամսյակ - «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի տնտեսական սպասարկմա բաժնի կողմից 2026 թվականի առաջին եռամսյակի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ստորաբաժանումներին է տրամադրվել դիզելային վառելիք, բենզին, գազ, տնտեսական ապրանքներ:

Իրականացվել է ավտոտրանսպորտի աշխատանքի, վառելիքի և քսայուղերի շարժի հաշվառում, կատարվել է 2 ավտոմեքենաների ընթացիկ վերանորոգում, անցկացվել է 6 մեքենայի տեխ.զննում և գազաբալոնների փորձարկում, կնքվել է 9 ավտոմեքենայի ապահովագրական ծառայությունների պայմանագիր:

Ապահովվել է խմելու ջրի, բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման սարքավորումների անխափան աշխատանքը:

Տրանսպորտային միջոցների մասին կազմվել են թերությունների ակտեր, տեխնիկական բնութագրեր և ներկայացվել են համապատասխան գնման ընթացակարգեր կազմակերպելու համար:

Ներկայացվել է գնման հայտեր ապրանքների ձեռք բերման համար:

Իրականացվել է շենք-շինությունների և հարակից տարածքների մաքրման աշխատանքներ:

Երկրորդ եռամսյակի ընթացքում իրականացվել են հետևյալ աշխատանքները.

Ստորաբաժանումներին է տրամադրվել դիզելային վառելիք, բենզին, գազ, տնտեսական ապրանքներ:

Իրականացվել է ավտոտրանսպորտի աշխատանքի, վառելիքի և քսայուղերի շարժի հաշվառում, կատարվել է 2 ավտոմեքենաների ընթացիկ վերանորոգում, անցկացվել է 6 մեքենայի տեխ.զննում և գազաբալոնների փորձարկում, կնքվել է 5 ավտոմեքենայի ապահովագրական ծառայությունների պայմանագիր:

Ապահովվել է խմելու ջրի, բնական գազի և էլեկտրաէներգիայի սպառման սարքավորումների անխափան աշխատանքը:

Տրանսպորտային միջոցների մասին կազմվել են թերությունների ակտեր, տեխնիկական բնութագրեր և ներկայացվել են համապատասխան գնման ընթացակարգեր կազմակերպելու համար:

Ներկայացվել է գնման հայտեր ապրանքների ձեռք բերման համար:

«Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի Նորաշենի արգելանոցում իրականացվել է մաքրման աշխատանքներ:

Պարկի ափամերձ տարածքներում իրականացվել է ապօրինի կառուցված շենք-շինությունների քանդման և մաքրման աշխատանքներ:

Քաղաքացիներին և ՊՈԱԿ-ի վարձակալներին սեզոնային համունքներով տրամադրվել է աղբամաններ և պառկելաթախտեր:

«Սևան» ազգային պարկ»
ՊՈԱԿ-ի տնօրեն _____**Կ. Մնացականյան**
/ստորագրություն/